ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«17» 02 2026թ. N 20/114

«Արտակ Աբգարյան» ԱՁ-ի տնօրեն՝
Ա. Աբգարյանին,
ՀՎՀՀ 40095185
ՀՀ, ք. Երևան, Պռոշյան., 29բն.
Էլ. հասցե՝ abgaryan-97@mail.ru

Հարգելի՛ պարոն Աբգարյան,

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «Արտակ Աբգարյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Վաճառող) (ՀՎՀՀ 40095185, գործունեության հասցե՝ ք. Երևան, Պռոշյան., 29բն.) միջև 18.07.2025 թվականին կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/2-ՀՊՍ-6» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է (N 18 չափաբաժնով՝ 199920.00 (մեկ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 20 հատ ցանցային բաժանարարի մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը՝ Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել՝ 29.08.2025թ. որի ընթացքում Վաճառողի կողմից չեն իրականացվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և չի մատակարարվել Պայմանագրի N18 չափաբաժնով նախատեսված 199920.00 (մեկ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ արժողությամբ 20 հատ ցանցային բաժանարարը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ

պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը, իսկ Օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ/ ենթակետը և 8.11 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի լուծում է 18.07.2025 թվականին կնքված N «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/2-ՀՊՍ-6» ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, **որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ Դուք վճարեք պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը Ձեզ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում չի կայացնի և չի ներկայացնի լիազորված մարմին:

Բացի այդ, << Արտակ Աբգարյան >> ԱՁ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն փոխանցել 1,099,56 (հազար իննսունինը ամբողջ հիսունվեց) ՀՀ դրամ՝ որպես տույժ և տուգանք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագրի բնօրինակը):

Տեղեկացնում ենք, որ եթե «Արտակ Աբգարյան» ԱՁ ընկերության (ՀՎՀՀ 40095185, գործունեության հասցե՝ ք. Երևան, Պռոշյան., 29բն.) կողմից վճարման ենթակա գումարները (պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ փոխանցվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկելու վերաբերյալ համապատասխան գործողություններ:

Ա. Հակոբյան